

համագիւղացի Ապրօին, որին թախանձում է վերադառնալ հայրենիք:

Ու հիւանդը՝ երկրի կարօտից ձգուած՝ ճանապարհ է ընկնում, Ապրօյի հետ դէպի արիւնոտ, բայց միշտ ըղձալի վաթանը...

Ա. Զանեանցի՝ «Երկու պատկեր», 1905, Բագու, 10 կողէկ:

Գիւղական և գործարանային կեանքի այս երկու պատկերները մեղանշում են և՛ լեզուի և՛ ճաշակի տարրական կանոնների դէմ: Մեր սկանակ գրողները դեռ ևս չըմբռնեցին այն հասարակ, ակնյայտ ճշմարտութիւնը, որ առանց որոշ աստիճանի պատրաստութեան, անկարելի է հրապարակ իջնել: Ապա թէ ոչ ծիծաղելի են դառնում և՛ իրանք, և այն ցեղի գրականութիւնը, որի գործաւորները ուզում են լինել: Օր. եթէ պ. Զանեանցը քիչ ու շատ հայերէնի տեղեակ լինէր, այս տեսակ աղաղակող սխալներ չէր անի:

«Մույլ և վիթխարի դէի պէս ինչպէս մի սև ուրուական». սա ասուած է գիւղի համար: Եթէ գիւղը նմանեցնուած է դնւ-ի, էլ ի՞նչպէս այդ դէր միաժամանակ կարող է ուրուական լինել. տարբեր բան էր եթէ ասէր. «մույլ և վիթխարի դէի, ուրուականի պէս և այլն»: Յետոյ նոյն գիւղը նրկարագրելիս տեսէք թէ ի՞նչեր է ասում. «մույլ և վիթխարի դէի պէս ինչպէս մի սև ուրուական, յոգնած մրզուած կեանքի դաւերից, պարփակուած անհամար վշտի մէջ վիզը ծուռ, ընրանը ըաց, օձապտոյտ մէջքը թէք ընկած էր և այլն»:

«Վիզը ծուռ» գիւղ՝ ինչ որ է, բայց «բերանը ըաց» գիւղ: Պ. Զանեանցը իսկապէս շատ հարուստ երևակայութիւն ունի՛ Բայց սրանք դեռ ոչինչ: Պ. Զանեանցը կոռուցնում է մի մօր՝ որի միակ որդին հիւանդ է—Աստուծոյ հետ և նրա բերանում դնում է այս կարգի անէծքներ: «Ո՞ր հարևանիս փիսութիւն արի, ասս, թէ ճիշտ է եկ աչքս հանի... Անջիգեար Աստուած... ողորմութիւնդ գլխիդ խռով կենս, ինձ երբ կ'ողորմես... պարտական մնաս... թախտդ ցրիւ գայ... Մրատես Աստուած աչքդ բռունանյ... ան գեալուր Աստուած...»

Այս բոլորի վրայ աւելացրէք և այն, որ գիրքը տպուած է սարսափելի սխալներով, որոնց գլխաւորները միայն ուղղել են ձեռքով: